ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1488 13.11.2014թվ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍՍՊ
ՄՏՊ № 4632
17 11 2014

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՐԵՎԱՆՅԱԿԱՆ
ՄՏՊ № 8818
17 11 2014

Հարգելի պարոն Գասպարյան.

16.09.2014թ-ին թիվ 2621/1460 գրությամբ Դիտորդական խումբը դիմել էր ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչության պետ, ոստիկանության գեներալ-մայոր պարոն Վ. Օսիկյանին, խնդրելով տալ տեղեկություն, թե Հեղինե Հայկազի Հարթենյանը ինչ մարմնական վնասվածքներով է ընդունվել ՀՀ ԱՆ <<Արովյան>> ՔԿՀ:

Ի պատասխան 18.09.2014թ-ին թիվ Ե40/4-2783 գրությամբ տրվել է մեկնաբանություն, որ Հեղինե Հայկազի Հարթենյանը ՀՀ ԱՆ <<Արովյան>> ՔԿՀ է ընդունվել 26.02.2014թ-ին և վերջինիս մարմնի զննության ժամանակ արձանագրվել է՝ <<*ձախ նախաբազկի ներսային մասում կապտուկ մոտ 1-2սմ տրամագծով, աջ նախաբազկի վերին հատվածում կապտուկ 2-3 սմ տրամագծով, աջ ձեռքի դաստակին կապտուկ 1 սմ տրամագծով: Աջ և ձախ ազդրերի ետնային մասում առկա են եղել կարմիր հետքեր: Որովայնի աջ հատվածում հետվիրահատական սպի մոտ 20 տարվա վաղեմության, աջ նախաբազկի մոտ 2-3 սմ երկարության վաղեմի սպի, աջ դաստակին փոքր կարմիր հետք*>>:

Նշվածի վերաբերյալ Դիտորդական խումբը 10.10.2014թ-ին թիվ 2621/1472 գրությամբ ՀՀ ոստիկանությանը խնդրել էր տալ տեղեկություն, թե Հեղինե Հայկազի Հարթենյանի մոտ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում ի՞նչ մարմնական վնասվածքներ է գրանցվել, այնտեղ գտնվելու ընթացքում ի՞նչ մարմնական վնասվածքներ է ձեռք բերել և ի՞նչ մարմնական վնասվածքներով է տեղափոխվել ՀՀ ԱՆ <<Արովյան>> ՔԿՀ:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

23.10.2014թ-ին թիվ 2/2-1-2680 գրությամբ տրվել է մեկնաբանություն, որ Հ. Հարթենյանը Երևան քաղաքի վարչության Երևանի ՀՊՎ է ընդունվել 21.02.2014թ-ին ժամը 04.45-ին և բուժզննության ընթացքում մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

21.02.2014թ-ին քննչական գործողություն կատարելու նպատակով Հ. Հարթենյանը դուրս է բերվել ՀՊՎ-ից և նույն օրը հետ է վերադարձվել ՀՊՎ , որից հետո սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում վերջինիս ***ազդրերին հայտնաբերվել են կարմրավուն հետքեր*** :

Այսպիսով, խնդրում ենք Դիտորդական խմբին հայտնել թե ներկայացված ***մարմնական վնասվածքների տարբերությունը*** Հ. Հարթենյանը որտեղ է ստացել, ինչ պայմաններում, ում կողմից և ինչ միջոցներ են ձեռնարկվել տվյալ ուղղությամբ:

Կից ներկայացնում ենք՝

1. Դիտորդական խմբի թիվ 2621/1460 գրությունը
2. ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչության կողմից տրված մեկնաբանությունը

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3162 << 03 >> 12 2014թ.

13.11.2014թ. թիվ 2621/1488 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Երևան քաղաքի վարչությունում: Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ձերբակալված Հեղինե Հայկազի Հարթենյանը Երևան քաղաքի վարչության ՁՊՎ է ընդունվել 21.02.2014թ. ժամը 04.45-ին: Հ.Հարթենյանը սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

21.02.2014թ. ժամը 12.50-ին Հ.Հարթենյանը հայտի հիման վրա քննչական գործողություն կատարելու նպատակով դուրս է բերվել ՁՊՎ-ից և հետ է վերադարձվել նույն օրը ժամը 23.50-ին: Հ.Հարթենյանը դարձյալ ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում վերջինիս ազդրերին հայտնաբերվել և արձանագրվել են կարմրավուն հետքեր: Նշված վնասվածքների վերաբերյալ իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին և Երևան քաղաքի Նոր Նորքի քննչական բաժնից ստացված գրության հիման վրա իրազեկումը գրանցվել է ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի <<Հանցագործությունների մասին դիմումների, հաղորդումների, գրանցման-հաշվառման>> թիվ 1 գրքում՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քննություն կատարելու համար:

Հ.Հարթենյանի մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկատվություններ ստանալու համար առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե, քանի որ ՀՀ ոստիկանությունը նրա մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում:

ՀՀ ոստիկանության շտաբ